

ԵՐԵՔ ԿԻՆ ԴՈՎՏՈՐ ՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Նրանք՝ կենսաբանական գիտությունների զոկտորներ Փառանձեմ Սարուխանյանը, Ազնիվ Պետրոսյանը, Թոմեյա Ղալաշյանը արդեն մոտ երեք տասնամյակ է աշխատում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի մանրէակենսաբանական ինստիտուտում: Հինգ բաժիններ կան այս ինստիտուտում, որոնցից երեքը ղեկավարում են նրանք:

Գիտահետազոտական այս հիմնարկի 150 աշխատակիցներից 90-ը կանայք են, որոնցից երեքը կենսաբանական գիտությունների զոկտորներ են, 11-ը՝ գիտությունների թեկնածուներ, 7-ը՝ ավագ և 42-ը՝ կրտսեր գիտաշխատողներ:

1943 թվականին է հիմնադրվել ինստիտուտը և իր քառորդաբայա ճանապարհ

հին դարձել է սովետական երկրի աչքի ընկնող գիտահետազոտական հաստատություններից մեկը: Այստեղ, ինչպես տեսական, նույնպես և գործնական շատ խնդիրներ են լուծվում: Կարևոր ուշագրությունը նրվիրելով հողի մանրէակենսաբանական հարցերի ուսումնասիրությանը՝ ինստիտուտի գիտնականները ստացել և արտադրության են հանձնել բույսերի բերքատվության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեցող մանրէական պարարտամիջոցներ՝ նիտրագին և ազոտոբակտերին: Պարզաբանված են հողի կենսաբանական տարրեր պրոցեսները՝ հատկապես Հայաստանի ազոտների յուրացման ուղղությամբ: Ներկայումս ինստիտուտի

աշխատակիցները ձեռնամուխ են եղել թիթեռնածաղկավոր բույսերի համար մանրէական նոր պարարտամիջոցների ստացմանը: Գիտական այս հետազոտությունը ղեկավարում է կենսաբանական գիտությունների զոկտոր Ազնիվ Պետրոսյանը:

Տարիները սպիտակ թելեր են թողել մագերի մեջ: Գաղթի՝ ճանապարհները, մանկության ու պատանեկության տխուր հուշերը, հետազոտությունների ու ուսումնասիրությունների անընդհատ գիշերները ակոս են բացել ճակատին: Մնվել է վանում, 1903 թվականին: Տակավին 6 տարեկան՝ կորցնում է հորը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մոր հետ հեռանում են ավեր դարձած

ծննդավայրից, և հույսի ժայպվեներ նրանց ձգում է Երևան: Կորցնում է և մորը: Որբանոցում կրթված և դաստիարակված Ազնիվը 1921 թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական բաժինը: Դեռ ուսանողական տարիներից նա սկսում է հետաքրքրվել մանրէակենսաբանություն հարցերով, որոնց ուսումնասիրմանը հետագայում նվիրելու էր իր ողջ գիտակցական կյանքը: Ազնիվ Պետրոսյանի անվան հետ է կապված բերքատվությունը բարձրացնող այնպիսի պարարտամիջոցների ստեղծումը, որոնք նպաստում են Հայաստանի տարբեր հողատեսակների մանրէակենսաբանական պրոցեսների աշխուժացմանն ու արագացմանը: Թիթեռնածաղկավոր բույսերի պալարամանրէների ուսումնա-

սիրությունը զոկտորական գիտերտացիան նոր գուռ է բացում այդ բնագավառում: Ազնիվ Պետրոսյանը 20 տարվա մանկավարժական աշխատանքի վաստակ ունի, 48 գիտական և 3 գիտահանրամատչելի աշխատությունների հեղինակ է: Առ ի գնահատություն Հայաստանի այս գիտնական դասեր մեծ վաստակի՝ նրան շնորհվել է բարձրագույն պարգև՝ Լենինի շքանշան:

Կամոյի շքանշան է ծնվել Փառանձեմ Սարուխանյանը: Արդյոք նրա ծնողները կըմտածեին, որ սարերի զբերկում ծնված իրենց դուստրը մի օր դառնալու է Հայաստանի անվանի կին գիտնականներից մեկը: Արդեն երեք տասնամյակ է՝ Փառանձեմը ուսումնասիրում է շաբարասնկերն ու կաթնատվային մանրէները, որոնց օգնությունը լուծվում

են գինեգործական, հացաթխման, պանրագործության մի շարք խնդիրներ: Փառանձեմ Սարուխանյանի ղեկավարած բաժնում կենսաբանական գիտությունների թեկնածուներ Ռուզաննա Քարիմյանը, Հռիփսիմե Հախինյանը, Մարտ Փահլևանյանը քիմիական, գյուղատնտեսական, սննդի և այլ թափոնների հիմքից ստանում են կերպարվի շաբարասնկեր, որոնք որպես լիարժեք անասնակեր օգտագործվում են անասնապահության բնագավառում:

Ինստիտուտի զիրեկտոր Աֆրիկյանի հետ մտնում ենք Քրույսերի միկրոբային խթանի շնորհիվ բաժինը: Այստեղ երկար տարիներ ուսումնասիրվում են գյուղատնտեսական բույսերի տարբեր մանրէներից առաջացած հիվանդությունները: Կենսաբանական գիտու-

թյունների զոկտոր Թոմեյա Ղալաշյանի կողմից ղեկավարվող այս բաժնում բույսերի տարբեր հիվանդություններ հարուցող միկրոօրգանիզմներից ստացվում են բույսերի աճման խթանիչներ, որոնք արագացնում են աճը, արմատակալումը: Արգեն ուսումնասիրվել են լուլիկի, լոբու, բագուկի, սլոպեղի և բանջարեղենի սլոպեղի և այլ տեսակների հիվանդություն պատճառներն և կերպարվի շաբարասնկեր, որոնք որպես լիարժեք անասնակեր օգտագործվում են արտադրության մեջ:

Թոմեյա Ղալաշյանի 28 աշխատանքային տարիները և 30 գիտական աշխատությունները օգնել և օգնում են մանրէակենսաբանությանը նվիրված հարյուրավոր երիտասարդ գիտնականների առաջընթացին: ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ